Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/17 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ «02» հուլիսի 2021թ.
ժամը 09:20

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Թադևոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Հովհաննիսյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Պատվիրատուն՝ Ջրվեժի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/17» ծածկագրով Ջրվեժ համայնքի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով ընթացակարգի բացման և գնահատման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/17 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցման հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլ.փոստ
1	«Էն Շին» ՍՊԸ	ք.Երևան, Անտառային 170 հեռ. 094 179417 martoyan-arman@mail.ru
2	«Բալահովիտ-1» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, 8 փող. 17-17/1 հեռ. 077 428393, 091 428394 balahovit-1@yandex.ru
3	«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ.Լանջաղբյուր, Թումանյան փող. 1/1 հեռ. 099 32 22 82 levshin-sp@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը.

Համապատասխանում են՝ «Էն Շին» ՍՊԸ -ի, «Բալահովիտ-1» ՍՊԸ-ի և «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են .

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը (ՀՀ դրամով)			Նախահաշվային արժեք
		Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ-ն	Առաջարկված ընդհանուր գինը	
1	«Էն Շին» ՍՊԸ	50 000 000	10 000 000	60 000 000	61 397 769
2	«Բալահովիտ-1» ՍՊԸ	48 606 569	9 721 314	58 327 883	
3	«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ	59 990 766	9 998 461	59 990 766	

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/17 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների ներկայացված փաստաթղթերի փաթեթի վերաբերյալ.

4.1 «Բալահովիտ-1» ՍՊԸ-ի և «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

4.2 «Էն Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

- Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի և ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/17 ծածկագրով հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4.3 կետի 3)-րդ ենթակետի պահանջի՝

հայտի ապահովումը ներկայացված չէ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջը՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել անհամապատասխանություններ արձանագրված մասնակցին՝ «Էն Շին» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև 2021 թվականի հուլիսի 6-ի ժամը 18:00-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.Նիստը ընդհատվում է մինչև 2021 թվականի հուլիսի 7-ի ժամը 09:20-ն՝ «Էն Շին» ՍՊԸ -ի կողմից շտկված փաստաթղթերի ներկայացման հիման վրա հայտերի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Թադևոսյան

Անդամներ՝ Ս.Հովհաննիսյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան